

[1] Դուրս գրման ամսաթիվ			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
17	Փետրվար	2022 թ.		Բ	1674936962
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
17	Փետրվար	2022 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			3 Հունվար, 2022 թ.	Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳՂ-2-22	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արձանագրություն 1					
[7.1] ՀԳՄ կտրոսի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՍՈՒՅԱ ՍԵՐՈԲՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱԶ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ N 1570064545140100							
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍՆՈՎԷ ՀՈՎԷԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիալ և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՍԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ. N 900011180081							
[18] Գտնվելու վայրը (ընկալության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար	Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ընդհանրակառուցվածք)	Չափի միավորներ	Շրջանում ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Ձեռք(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	26	1000		26000
2	Ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	63	1000		63000
3	Հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	էջ	10.5	1650		17325
4	Հայերեն-գերմաներեն գրավոր թարգմանություն	էջ	4.5	2450		11025
5	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	9	1000		9000
6	Անգլերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	3.5	1650		5775
7	Հայերեն-գերմաներեն գրավոր թարգմանություն	էջ	3	2450		7350
8	Հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժ	0.5	4300		2150
9	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	12	1000		12000
10	Հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	11	1000		11000
11	Գերմաներեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	1	2450		2450
12	Հայերեն-գերմաներեն գրավոր թարգմանություն	էջ	1	2450		2450
13	Գերմաներեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	1.5	2450		3675
14	Հայերեն-գերմաներեն գրավոր թարգմանություն	էջ	2	2450		4900

Ընդամենը

178100

Մատայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

17/02/2022 14:53:31

Մատայություն  
(աշխատանք)  
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

18/02/2022 15:07:26

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Թարգմանիչ ներգրավելու մասին

03-ը հունվարի 2022թ.

ք.Կապան

Սյունիքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Ն.Արշակյանս ուսումնասիրելով թիվ 41163921 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2021թ. նոյեմբերի 8-ին՝ ժամը 01:00-ից մինչև 01:30-ն ընկած ժամանակահատվածում, Կապան քաղաքի Ձորքի 1/3 հասցեում գտնվող «Սմարթ» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետում ծագած վիճաբանության ընթացքում մի խումբ անձինք խուլիգանական դրդումներով ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել նույն սուպերմարկետի աշխատակից Արմեն Արարատի Ավանեսյանի մարմնի տարբեր մասերին՝ դիտավորությամբ վերջինիս առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Դեպքի առթիվ 2021թ. նոյեմբերի 10-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 41163921 քրեական գործը:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հայերենից ռուսերեն թարգմանել թիվ 41163921 - քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը, դրան կից հավելվածները և մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը, քանի որ մեղադրյալները չեն տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Թիվ 41163921 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ թարգմանչական գրասենյակի թարգմանիչ Սոֆյա Սերոբյանին:
2. Սոֆյա Սերոբյանին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին

Սյունիքի մարզի դատախազության դատախազ,  
երրորդ դասի խորհրդական

  
Ն.Արշակյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է 2022թ. հունվարի 03 ին: Ես նախագգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ



Սոֆյա Սերոբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**թարգմանիչ հրավիրելու մասին**

04.01.2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացված Գագիկ Զախարյանի վերաբերյալ 29.12.2021թ. ստացված հանձնման միջնորդությունը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

29.12.2021թ. -ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է Գագիկ Զախարյանի հանձնման միջնորդությունը՝ կից փաստաթղթերով՝ որոսերն լեզվով:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ՍՈՖՅԱ ՍԵՐՈՒՅԱՆՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի՝ ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը,

**ՈՐՈՇԵՑԻ**

- 29.12.2021թ. ստացված Գագիկ Զախարյանի հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՖՅԱ ՍԵՐՈՒՅԱՆՆԸ (անձնագիր AS0538862, տեղեկանք տրված ՀՀ ԱՆ 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
- Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


*Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության պետի տեղակալ*



**Ա. Հովհաննիսյան**

Արարա ստեղծված օրենսդր. ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտավանություններն իմ պարզ նա և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտավանադրության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ  
Մախյա Սերոբյան



«14» .01 2022 թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

14.01.2022թ.

ք.Երևան

«Վախճանի դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Խ.Երեմյանս, ուսումնասիրելով Արթուր Հովհաննեսի Բերբերյանի վերաբերյալ «Վախճանի եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104521 քրեական գործի նյութերը».

## Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2021 թվականի դեկտեմբերի 27-ին «Վախճանի դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վախճանի եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84104521 քրեական գործն ըստ մեղադրանքի Արթուր Հովհաննեսի Բերբերյանի՝ «Վախճանի օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով»:

2021 թվականի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացվել թիվ 84104521 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վախճանի դատախազության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատախազությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատախազությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Վախճանի դատախազության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատախազության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Արթուր Հովհաննեսի Բերբերյանը հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է անգլերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին որոշումը հայերենից անգլերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Մարինե Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AN 0470399, տրված՝ 13.05.2013թ., 057-ի կողմից, դիպլոմ AB № 140214՝ տրված Խաչատուր Արմավյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պետական քննական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 21-ի որոշմամբ):

Մարինե Սերոբյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ անգլերեն լեզու, ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Արթուր Հովհաննեսի Բերբերյանի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104521 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Սոֆյա Սերոբյան» ԱԶ-ի թարգմանիչ Մարինե Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AN 0470399, տրված՝ 13.05.2013թ., 057-ի կողմից, դիպլոմ AB № 140214՝ տրված Խաչատուր Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի՝ պետական քննական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 21-ի որոշմամբ):

2. Մարինե Սերոբյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Մարինե Սերոբյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ



Խ.Սերենյան

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Մարինե Սերոբյան

« 14 » 01 2022թ.

## ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

04.01.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության Միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով Էլահեհ Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աքբարի Դեհղանի Նուշաբադիի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը,

### ՊԱՐԶԵՑԻ՝

Համաձայն ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացված տեղեկության՝ թիվ 58201521 քրեական գործով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալներ Էլահեհ Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աքբարի Դեհղանի Նուշաբադիի Ն հայտնաբերվել են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունից ստացվել են Էլահեհ Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աքբարի Դեհղանի Նուշաբադիի հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ գերմաներեն թարգմանությամբ:

«Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

Նկատի ունենալով, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության չհասցեագրված՝ Էլահեհ Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աքբարի Դեհղանի Նուշաբադիի հանձնման հարցումները ենթակա է համապատասխանեցման վերոնշյալ կոնվենցիայի պահանջներին, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել գերմաներեն, իսկ ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, իսկ այդ պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով, «Հանձնման մասին» 1957թ. դեկտեմբերի 13-ի Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

1. Էլաիեի Հասանի Բայաթի և Մոհամմադ Ալի Աքբարի Դեհլանի Նուշաբադիի հանձնման հարցման գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԻՆ (ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական  
համագործակցության վարչության դատախազ

  
Ա. Խաչատրյան

\*Սկզբնա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«...04...».....01..... 2022թ.

Ս. Ազիզյան

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## Թարգմանիչ հրավիրելու մասին

12 հունվարի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Ռ-Դ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV)** հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշումը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ձվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2021 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 06<sup>00</sup>-ին, բաժին են բերման ենթարկել, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի (կաշառք ստանալ) մեղադրանքով հետախուզվող, Ռ-Դ և Իսրայելի պետության քաղաքացի **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV)**, ում նույն օրը՝ ժամը 08<sup>50</sup>-ին, ձերբակալել են:

**ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵԴ/1187/06/21 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Ստացվել է Ռ-Դ իրավասու մարմինների միջնորդությունը՝ **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** այդ երկրի քրեական օրենսգրքի Ռ-Դ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասի «Ե» կետով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդությունը:

ՀՀ գլխավոր դատախազի 24.12.2021թ. որոշմամբ **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ** հանձնման միջնորդությունը բավարարվել է և թույլատրվել է նրա հանձնումը Ռ-Դ իրավասու մարմիններին:

2021 թվականի դեկտեմբերի 27-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ** հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԸ (YAN ANDREEV) չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV) հանձնելու համար կալանավորելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԸ (YAN ANDREEV) որոշումը գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13.05.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի  
տեղակալ, արդարադատության  
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանավորության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«12».....01..... 2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

12.01.2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ.Մելիքյանս, ուսումնասիրելով Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմնից ստացված Ակրար Կարիմի վերաբերյալ հանձնման միջնորդության կապակցությամբ ստացված լրացուցիչ փաստաթղթերը,

**ՊԱՐՁԵՑԻ՝**

21.10.2021թ.-ին ՀՀ ԱԳՆ միջոցով ստացվել է Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմնից Ակրար Կարիմի հանձնման միջնորդությունը՝ կից փաստաթղթերով՝ անգլերեն լեզվով:

07.01.2022թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմիններից ստացվել են ՀՀ գլխավոր դատախազությունից փաստաբանի դիմումի կապակցությամբ հայցված լրացուցիչ նյութեր՝ անգլերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ՄԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ակրար Կարիմի փաստաբանի դիմումի կապակցությամբ ստացված լրացուցիչ փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՄԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ(անձնագիր AN0470399, դիպլոմ AB թիվ 140214) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքեռյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը նրկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության դարասիւս



Գ. Մելիքյան

Սրազու սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախնազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  
Մարինե Մերոբյան



«Թ» 01. 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ  
Թարգմանիչ հրավիրելու մասին

13.01.2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանն, ուսումնասիրելով №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐՁԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 16.02.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

11.01.2022թ. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում ստացվել են ՀՀ արդարադատության նախարարության առաջին տեղակալի կողմից տրված երաշխիքները (№11.2/991-22 գրությունը): Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ոստիկանության ԱԿԲ-ի գրության, գերմանական կողմը պահանջել է Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով,

անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍՈՒԱ ԱԶԻՑՑԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Գ.Չ. ԳԵՎՈՐԳՑԱՆԻ հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ արդարադատության նախարարության առաջին տեղակալի կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՒԱ ԱԶԻՑՑԱՆԻՆ (ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական  
համագործակցության վարչության դատախազ

Ա. Խաչատրյան

Մտացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվություն մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ  
ՍՈՒԱ ԱԶԻՑՑԱՆ

«13».....07..... 2022թ.

# ՈՐՈՇՈՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«14» հունվար 2022թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյանս, ուսումնասիրելով Մամիկոն Ալեքսանյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատավարական ընթացակարգի կապակցությամբ կազմված փաստաթղթերը,

## ՊԱՐԶԵՑԻ՝

2021 թվականի ապրիլի 11-ին՝ ժամը 23:00-ին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից քերման է ենթարկվել ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 322.1 հոդվածի 2-րդ մասի «ա» կետի հատկանիշներով (անօրինական միգրացիայի կազմակերպումը) հետախուզվող ՄԱՄԻԿՈՆ ԼՅՈՒԴՎԻԿԻ /ԼՅՈՒԴՎԻԿԻ/ ԱԼԵԿՍԱՆՅԱՆԸ /ԱԼԵԿՍԱՆՅԱՆԸ/ (ծնված 22.12.1980թ.):

2021 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 00:15-ին, Մ. Ալեքսանյանը ձերբակալվել: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ Մամիկոն Ալեքսանյանի նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով:

2021 թվականի ապրիլի 20-ին և 26-ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է ՄԱՄԻԿՈՆ ԱԼԵԿՍԱՆՅԱՆԻՆ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 322.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը:

2021 թվականի մայիսի 20-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ ՄԱՄԻԿՈՆ ԱԼԵԿՍԱՆՅԱՆԻ նկատմամբ կիրառվել է հանձնման համար կալանավորում 2 ամիս ժամկետով, որը օրենքով սահմանված կարգով երկարացվել է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 11-ը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 12-ի որոշման դեպ Մ.Ալեքսանյանի պաշտպանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որի քննությունը նշանակվել է 2022 թվականի հունվարի 17-ին՝ ժամը 10:00-ին:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ՍՈՅՅԱ ՍԵՐՈՒՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և ում ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական

դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

*ՈՐՈՇԵՑԻ*

1. Մամիկոն Ալեքսանյանի նկատմամբ հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դատարանի որոշման դեմ ներկայացված բողոքի քննարկմանը թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին (անձնագիր AS0538862, տեղեկանք տրված ՀՀ ԱՆ 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դոնիակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:


ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ



Գ. Մեյիբյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտախանութային մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«14» հունվար 2022թ.

Ս. Սերոբյան

ՈՐՈՇՈՒՄ  
Թարգմանիչ հրավիրելու մասին

18.01.2022թ.

ք.Արտաշատ

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Ա.Սաֆարյանս, ուսումնասիրելով թիվ 27176221 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ ԶԿ Արարատի մարզային քննչական վարչությունում քննված թիվ 27176221 քրեական գործն ըստ մեղադրանքի Գևորգ Բարկարախանովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Արարատի մարզի դատախազություն: 23.12.2021թ. քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան:

Մեղադրյալը չի տիրապետել հայերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառնություններ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,


ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 27176221 գործով հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AS0538862, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:


2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

Արարատի մարզի դատախազության  
ավագ դատախազ՝

  
Ա.Սաֆարյանս

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  ..... 18.01.2022թ., Ս. Սերոբյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«20» հունվարի 2022թ.

ք.Մարտակերտ

Թիվ 2 կայազորի զինվորական դատախազի տեղակալ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Է.Աղաբալյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 90078921 քրեական գործի էլեկտրոնային տարբերակով առկա նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՊԲ 33651 զորամասի զինծառայող, շարքային Աշոտ Անդրանիկի Բաղալյանը 2021թ հունվարի 29-ին ժամը 10-ից մինչև ժամը 21-ը գտնվելով ազատ արձակման մեջ, ռազմական դրության պայմաններում առանց հարգելի պատճառների ժամանակին երեք օրից ավելի տևողությամբ ծառայության չի ներկայացել:

Դեպքի առթիվ ՀՀ ՊՆ ՌՈ Մարտակերտի ՌՈ բաժնում 08.02.2021թ.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ հարուցվել է թիվ 90078921 քրեական գործը: Հետագայում նշված քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի ԶԶԳՎ երրորդ կայազորային քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար:

2021թ. դեկտեմբերի 30-ին մեղադրական եզրակացությամբ Թիվ 2 կայազորի զինվորական դատախազություն է ստացվել թիվ 90078921 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Աշոտ Անդրանիկի Բաղալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 7-րդ մասով և Անդրանիկ Վլադիմիրի Բաղալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով-361-րդ հոդվածի 7-րդ մասով:

Թիվ 90078921 քրեական գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մեղադրյալ Ա.Բաղալյանը չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր խոսքին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ ստորագրությամբ հաստատել քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, սակայն մեղադրյալ Անդրանիկ Բաղալյանը չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր խոսքին, ինչպես նաև հաշվի առնելով, որ հայերեն փաստաթղթերը՝ թիվ 90078921 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը, անհրաժեշտ է թարգմանել ռուսերեն, իսկ **ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԸ** համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում, թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90078921 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշման ռուսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել **ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ (անձնագիր AS0538862, տեղեկանք, տրված ՀՀ ԱՆ-ի կողմից )** և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության

օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների  
հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Թիվ 2 կայագրի գինվորական դատախազի տեղակալ,  
արդարադատության 1-ին դասի խորհրդական

Է.Աղաբալյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Անդրեյան Արթուր Ասատուրի 2010/12022թ.

**ՈՐՈՇՈՄ**  
**թարգմանիչ հրավիրելու մասին**

18.01.2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

**ՊԱՐՁԵՑԻ՝**

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 16.02.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

10.01.2022թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԳԴՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի պատճենը՝ ԽԱՉԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 1 էջից բաղկացած փաստաթուղթ՝ գերմաներեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված՝ Խ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԻՆ (անձնագիր AR սերիայի №0206807, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ

կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝  
առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության դատախազ



Ա. Խաչատրյան

Սրագա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և  
ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և  
պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ  
հոդվածով նախատեսված պարտախանութության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  
ՍՈՒՆ ԱԶԻԶՅԱՆ



«18».....01..... 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

19.01.2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Նաչատրյանս, ուսումնասիրելով №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱԶԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 16.02.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱԶԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

18.01.2022թ. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում ստացվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրված երաշխիքները (№21/16-1042-17 գրությունը): Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՆ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ռատիկալության ԱԿԲ-ի գրության, գերմանական կողմը պահանջել է Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման արաբողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՆ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջևորդությունը լրացնող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆԻՆ (ՀՀ ԱՆ տեղեկանք տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու՝ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

*Միջազգային-իրավական  
համագործակցության վարչության դատախազ*



*Ա. Խաչատրյան*

*Մտացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

Թարգմանիչ  
ՍՈՆԱ ԱԶԻԶՅԱՆ



*«13.01.2022» 2022թ.*

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

31.01.2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №58210713 քրեական գործով հետախուզվող ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԴՈՆԵՐԻ վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

**ՊԱՐՁԵՑԻ՝**

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 26.11.2019թ. դիմել է Շվեյցարիայի Համադաշնության (այսուհետ՝ ՇՀ) իրավասու մարմիններին՝ №58210713 քրեական գործով հետախուզվող ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԴՈՆԵՐԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

31.01.2021թ. ՀՀ ԱԳՆ-ից ստացվել է ՇՀ արդարադատության դաշնային գրասենյակի հայտագրի պատճենը՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԴՈՆԵՐԻ հանձնման գործընթացի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ ՀՀ-ում քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ գերմաներեն ստացված փաստաթուղթն անհրաժեշտ է թարգմանել՝ սահմանված կարգով քննարկումն ապահովելու նպատակով, իսկ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. ՀՀ ԱԳՆ-ից ստացված՝ ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ԴՈՆԵՐԻ հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա

№ 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության դատախազ



Ա. Խաչատրյան

Սրբազան սույն որոշման օրինակը, իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարտասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«21»...01... 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ  
թարգմանիչ հրավիրելու մասին

31.01.2022թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐՁԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 16.02.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳՂՀ) իրավասու մարմիններին՝ №12141916 քրեական գործով հետախուզվող ԽԱՉԻԿ ՉԻՆԱՐԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳՂՀ իրավասու մարմինները՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

26.01.2022թ. ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում ստացվել են ՀՀ առողջության նախարարության տեղակալի կողմից տրված երաշխիքները (№21/16-1042-17 գրությունը): Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳՂՀ իրավասու մարմիններին՝ Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր քննությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳՂՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Համաձայն ՀՀ ոստիկանության ԱԿԲ-ի գրության, գերմանական կողմը պահանջել է Գ.Չ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել գերմաներեն թարգմանությամբ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է

առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Գ.Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և երան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

*Միջազգային-իրավական  
համագործակցության վարչության դատախազ*



*Ա.Խաչատրյան*

*Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

Թարգմանիչ  
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



*31.01.2022թ.*